ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
կոլեգիայի 2014 թվականի փետրվարի 27-ի նիստի

ք.Երևան 27 փետրվարի 2014թ.

Ժ. 17:00– 17:40

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը

Մասնակցում էին՝
Կոլեգիայի անդամներ

Ա.Ոսկանյան	Հայաստանի պետական ագրարային Համալսարանի ագրարային քաղաքականության ամբիոնի վարիչ
Ա.Թարվերդյան	«Հայաստանի պետական ագրարային համալասարան» հիմադրամի ռեկտոր
Յ.Ջավադյան	«Մելիորացիա» ՓԲԸ-ի տնօրեն, ՀՀ հանրային խորհրդի անդամ
Վ.Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» Իրավաբանական անձանց միության /ԳԱՖ/ նախագահ
Մ. Ջանվելյան	«Արզնու Տոհմային ԹՏԽ»ԲԲԸ-ի նախագահ
Ռ. Ծառուկյան	«Մուլտի ագրո» ՍՊԸ-ի տնօրեն
Գ. Բաղիյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Ս.Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ռ.Մակարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ

Հրավիրված էին՝

Գ.Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ա.Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական

Հ.Ծպնեցյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ
Ա.Հովհաննիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասանբուժության վարչության պետ
Ա.Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Կ. Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Գ.Ղազարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման վարչության պետ
Ա.Շիրվանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության արտաքին կապերի վարչության պետ
Գ. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Ա. Շիրվանյան, Ա. Ոսկանյան, Ա. Թարվերդյան, Յ. Ջավադյան Ա. Հարությունյան, Գ. Բաղիյան, Ս. Կարապետյան)

Ա. Շիրվանյանը իր զեկույցում նշեց, որ «Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագծի) ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Մաքսային Միությանն անդամակցության նախապատրաստման աշխատանքներով: Հայաստանի Հանրապետությունում Սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավման նպատակով սույն որոշմամբ սահմանվում են Մաքսային Միության պահանջներին համապատասխան սննդամթերքի մասին պարտադիր տեղեկատվության մակնշմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև սննդի շղթայի մակնշման համար պատասխանատու օպերատորների պարտականությունները: Սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում սննդամթերքի

վերաբերյալ պարտադիր տեղեկատվության մակնշման պահանջները կհամապատասխանեցվեն Մաքսային Միության պահանջներին, կապահովվի սննդամթերքի վերաբերյալ հավաստի, ամբողջական և մատչելի տեղեկատվություն ստանալու սպառողների իրավունքը, ինչպես նաև կօժանդակի ոլորտում գործող տնտեսավարողներին՝ թողարկվող արտադրանքի արտահանման խոչընդոտները հաղթահարելու և Մաքսային Միության շուկային ինտեգրվելու գործում:

Առաջարկություններ

Ա. Թարվերդյան՝

Նախագիծն անհրաժեշտ է լրամշակել հաշվի առնելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից ներկայացված առաջարկությունները:

Ա. Ոսկանյան՝

1) Նախագծում սահմանել «սնունդ» հասկացությունը,
2) հստակեցնել գյուղացիական տնտեսություններում արտադրվող սննդամթերքի մակնշման հետ կապված խնդիրները,
3) նախագծով սահմանել նաև օրգանական գյուղատնտեսության մակնշման պահանջները:

Յ. Ջավադյան

Նախագիծը անհրաժեշտ է համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մթերք վերամշակող արդյունաբերական ընկերությունների ոլորտային միությունների հետ:

Ա. Հարությունյանը նշեց, որ նախագծի ընդունումը կնպաստի սննդամթերքում առկա հավելումների ու բաղադրիչների տեսակների, մասնավորապես՝ գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի վերաբերյալ սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Գ. Բաղիյանը նշեց, որ սույն նախագիծը թարգմանվել է ռուսերեն լեզվից և պարտադիր տեղեկատվության մակնշման պահանջները համապատասխանում են Մաքսային Միության պահանջներին:

Ս. Կարապետյանը նշեց, որ նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Մաքսային Միության անդամակցության նախապատրաստական աշխատանքներով, սակայն մինչև Մաքսայիյն Միության լիիրավ անդամակցությունն անհրաժեշտ է նախագծում կատարել լրացումներ և փոփոխություններ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան :

Որոշվեց՝

1. Հավանություն տալ «Սննդամթերքի մակնշման ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին:
2. Լրամշակել նախագիծը և այն ներկայացնել շահագրգիռ հասարակական կազմակերպություններին ու պետական կառավարման մարմիններին՝ կարծիքի :

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ	Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	Գ. ԲԱԴԱԼՅԱՆ